ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 390-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 712-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» N 712-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 3-րդ կետի 4-րդ ենթակետը «դիմաց» բառից հետո լրացնել «, բացառությամբ՝ սույն որոշման N 8 հավելվածի «Է», «Ը» և «Թ» բաժիններում սահմանված հավելումների» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետով՝

«3.1. Սույն որոշման N 8 հավելվածով սահմանված հավելումները չեն վճարվում հավելվածում նշված ստորաբաժանումների (ծառայությունների) քարտուղարության, կադրերի, ֆինանսական, տնտեսական, հերթապահ ծառայությունների, Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնի ծառայողներին:».

3) N 8 հավելվածի «Ա-Թ» բաժինները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

Ա	**1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա տարածքային՝**		33,069
	1)	Բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ օպերատիվ գծով, տարածքային բաժանմունքի պետ, տարածքային բաժանմունքի պետի տեղակալ, բաժնի կազմում՝ քրեական հետախուզության, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի՝ պետ, պետի տեղակալ, ավագ օպերլիազոր, օպերլիազոր	
Բ	**2. ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական և մարզային վարչությունների՝**		26,455
	1)	ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության ծառայողներ	
	2)	փորձաքրեագիտական բաժանմունքի՝ պետ, ՀԿՀ ավագ փորձագետ, ավագ փորձագետ, փորձագետ	
	3. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա տարածքային բաժնի՝		
	1)	պետի տեղակալ ծառայության գծով	
	2)	պետի տեղակալ, ինքը և հետաքննության բաժանմունքի պետ	
	4. ՀՀ ոստիկանության տարածքային բաժնի, բաժանմունքի՝		
	1)	հետաքննության գծով ավագ տեսուչ, տեսուչ	
	2)	համայնքային ոստիկանության բաժանմունքի՝ պետ, տեղակալ, ավագ տեսուչ, տեսուչ	
Գ	**5. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա տարածքային բաժնի, բաժանմունքի՝**		21,164
	1)	բաժնի պետի տեղակալ անձնակազմի գծով	

	2)	անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի (խմբի)՝ դպրոցական ավագ տեսուչ, ավագ տեսուչ, տեսուչ	
	3)	համայնքային ոստիկանության բաժանմունքի (խմբի) պրոֆիլակտիկայի ավագ տեսուչ, տեսուչ	
	4)	օպերատիվ կապի և հատուկ տեխնիկայի՝ ավագ ինժեներ, ինժեներ	
	5)	թույլտվության համակարգի ավագ տեսուչ	
	6)	զորահավաքային աշխատանքների և քաղաքացիական պաշտպանության գծով ավագ տեսուչ	
	7)	ինֆորմացիայի և վերլուծության ավագ տեսուչ, տեսուչ	
	8)	ավագ	
	6. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների՝		
	1)	պետ	
	2)	տեղակալներ (օպերատիվ, ծառայության գծով և շտաբի պետ)	
	3)	քրեական հետախուզության՝ բաժնի պետ, տեղակալ, բաժանմունքի պետ, ՀԿԳ ավագ օպերլիազոր, ավագ օպերլիազոր, օպերլիազոր, կրտսեր օպերլիազոր	
	4)	անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի՝ պետ, ՀԿԳ ավագ օպերլիազոր, ավագ օպերլիազոր	
	5)	Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ի՝ պետ, տեղակալ օպերատիվ գծով, ավագ օպերլիազոր, օպերլիազոր	
	6)	ջրային տրանսպորտի ավագ տեսուչ, տեսուչ, ոստիկան	
Դ	**7. ՀՀ ոստիկանության՝**		16,931
	1)	քրեական ոստիկանության գլխավոր վարչության, ներքին անվտանգության վարչության ծառայողներ	
Ե	**8. ՀՀ ոստիկանության՝**		13,492
	1)	հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության ծառայողներ	
	2)	հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության ծառայողներ	

	9. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների՝		
	1)	պետի տեղակալ կադրերի և անձնակազմի գծով	
	2)	շտաբի ծառայողներ	
	3)	զորահավաքային աշխատանքների և քաղաքացիական պաշտպանության գծով ավագ տեսուչ, հետաքննության բաժանմունքի՝ ՀԿՀ ավագ տեսուչ, ավագ տեսուչ, թույլտվության համակարգի ՀԿՀ ավագ տեսուչ, թույլտվության համակարգի ավագ տեսուչ, կապի՝ բաժանմունքի պետ, ավագ ինժեներ, ինժեներ, կրտսեր տեսուչ, կազմվերլուծական բաժանմունքի՝ պետ, ՀԿՀ ավագ տեսուչ, ավագ տեսուչ, տեսուչ, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի՝ ավագ տեսուչ, տեսուչ	
	4)	Հասարակական կարգի ապահովման բաժնի, պրոֆիլակտիկայի բաժանմունքի (ծառայության խմբի)՝ պետ, պետի տեղակալ, ավագ տեսուչ, տեսուչ	
	5)	Երևան քաղաքի ՁՊՎ-ի պետի տեղակալ ծառայության գծով, ավագ տեսուչ, տեսուչ	
	10. Հասարակական կարգի պահպանության ջոկի ծառայողներ		
	11. Երևան քաղաքի վարչության հատուկ նշանակության գումարտակի, մարզային վարչություններին ենթակա տարածքային բաժինների պարեկապահակետային ծառայության դասակի, ջոկի, Երևան քաղաքի և մարզային վարչությունների ուղեկցող ստորաբաժանումների ծառայողներ		
	12. ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության՝		
	1)	Գնդի հրամանատար	
	2)	Գնդի հրամանատարի տեղակալ	
	3)	Գնդի գումարտակի հրամանատար	
	4)	Գնդի գումարտակի հրամանատարի տեղակալ	
	5)	Վաշտի հրամանատար	
	6)	Վաշտի հրամանատարի տեղակալ	
	7)	Ավագ պարեկ	
	8)	Ծառայության ավագ տեսուչ	

	9)	Տեխնիկայի գծով ավագ տեսուչ	
	10)	Պարեկ	
	11)	Ծառայության տեսուչ	
	12)	Կրտսեր պարեկ	
Զ	**13. ՀՀ ոստիկանության՝**		13,228
	1)	շտաբի, գործավարության և գաղտնիության ռեժիմի ապահովման, կադրային քաղաքականության, իրավաբանական, տնտեսական, անձնագրային և վիզաների, բժշկական, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունների, ինֆորմացիոն կենտրոնի, ՀՀ-ում ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի, մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժնի պետեր	
Է	**14. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության հատուկ նշանակության գումարտակի ծառայողներ**		20,000
Ը	**15. ՀՀ ոստիկանության պարեկային ծառայություն՝**		
	1)	Վարչության պետ	217,280
	2)	Վարչության պետի տեղակալ	212,960
	3)	Բաժնի պետ	266,600
	4)	Բաժնի պետի տեղակալ	267,790
	5)	Բաժնի կազմում բաժանմունքի պետ	260,890
	6)	ՀԿՀ ավագ տեսուչ (պարեկային ծառայության կազմակերպման և մոնիթորինգի և վերլուծության բաժինների)	220,430
	7)	Ավագ տեսուչ (պարեկային ծառայության կազմակերպման և մոնիթորինգի և վերլուծության բաժինների)	196,460
	8)	Տեսուչ (պարեկային ծառայության կազմակերպման և մոնիթորինգի և վերլուծության բաժինների)	245,140
	9)	Գնդի հրամանատար	192,920
	10)	Գնդի հրամանատարի տեղակալ	243,720
	11)	Գնդի գումարտակի հրամանատար	254,990
	12)	Գնդի գումարտակի հրամանատարի տեղակալ, վաշտի հրամանատար	211,430
	13)	Վաշտի հրամանատարի տեղակալ	194,580

	14)	Ավագ պարեկ	191,560
	15)	Ավագ տեսուչ (ծառայության, տեխնիկայի գծով)	191,560
	16)	Պարեկ	237,600
	17)	Տեսուչ (ծառայության)	237,600
	18)	Կրտսեր պարեկ	173,940
Թ	**16. ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության հատուկ նշանակության վարչության ծառայողներ**		13,228

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ